ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ԶԱՐԴԱՆԱԽՇՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ XIX—XX ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԱԶԻԿ ԱՎԱԴՅԱՆ

Հայկական տարազն ունի զարավոր պատմություն, բազմատեսակ է[1] և պայմանավորված հայ ժողովրդի կազմավորման պատմական պրոցեսի[2], աշխարհագրական, կլիմայական պայմանների տոանձնահատկություններով։ Հարուստ ու բազմատեսակ են նաև տարազի զարդաձևերը։ Հնուց ի վեր կիրառվել է տարազը զարդարելու երկու հիմնական եղանակ. առաջինը զգեստի վրա արտահայտված, նրան համակցված զարդաձևն է, երկրորդը՝ լրացուցիչ զարդեր կրելը։ Առաջինը բաժանվում է հետևյալ խմբերի՝ կտորի հյուսվածքի հետ կատարված նախշեր, ասեղնագործություն, ուրիշ կտորի երիզով կամ նույն կտորի վերագիր ձևով, դարսերով ու երիզակարով և ծալարոյորքով զարդեր։

Նախշերով զարդարել են բրդյա, բամբակյա, մետաքսյա կտորների տեսակները։ Նախշերն էին վանդակները, ուղիղ, գիդ-զաղ, ալիքանման գծերը, բուսական (ծառ, ծաղիկ, պտուղ) պատկերները։ Վանդակաձև նախշերի գործածությունը սկսվել է դեռևս ուրարտական շրջանից։ Վանի մոտ գտնվող Դարարեյ ամրոցի պեղումներից հայտնաբերված ուրարտական արվեստի աստվածուհու (Բարբատու) արձանիկի վրա պատմուճանը ծածկված է քառակուսի հյուսկեն զարդերով։ Թոփրախ-Կալեի պեղումներից հայտնաբերված ոսկյա մեդալիոնի վրա պատկերված երկու կանանց զգեստները, Կարմիր բլուրի պեղումներից գտնված անմորուք աստծու արձանիկի վրա պատկերված զգեստը նույնպես քառակուսի նախշերով են[4]։ Հայաստանի միջնադարյան քաղաքների պեղումներից բացված ջուլհակի հորերը[5] (ջլկհոր), հայտնաբերված հաստոցները, նրանցով արտադրված բրդյա, մետաքսյա[6], բամբակյա գործվածքները, ինչպես նաև գրավոր աղբյուրները վկայում են Հայաստանում կտավագործության, մետաքսագործության, ոսկեթել դիպակների, ծաղկաձարդ, վանդակավոր գործվածքների արտադրության մասին[7]։

XVIII—XIX դդ. վանդակավոր կտորը գործածվում էր Ակնի[8], Խարբերդի (Դ. Բարջանջ), Սվեդիայի և այլ վայրերի կանանց ու տղամարդկանց տարազը զարդարելիս։

Հայ ժողովրդի տարազաձևերի ուսումնասիրությունից պարզվում է, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին ավելի գործածական էին գծավոր և միագույն կտորները։ Գծավոր կտոր էր արտադրվում Սգերթում, Այնթապում, Արարկիրում[9] և Հայաստանի այլ գյուղերում ու քաղաքներում։ Արարկիրում արտադրվում էր հատկապես մանիսա կոչված բամբակյա կտորի մի քանի տեսակ, որոնցից կարում էին վերնազգեստ-անթտրի, զգուն[10], «Մոմիա» կոչված բամբակյա կտորի արտադրությամբ հայտնի էին Սասունը և Բաղեշը[11]։

---

1 Ան. Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1967, էջ 7։

2 Վ. Հ. Բդոյան, Զգեստավորման հարցերից. «Սովետական արվեստ», 1957, 3, էջ 55։

3 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, стр. 82, Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 32։

4 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, стр. 181, 183.

5 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, հ. 1, էջ 178, 260։

6 И. А. Орбели, Каталог Армянского музея, вып. I, С. Петербург, 1910, стр. 39.

7 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 261—282։

8 Ա. Մ. Քեչեյան, Ակն և ակնեցին, Պուքրեշ, 1948, էջ 92։

9 «Ազգագրական հանդես», գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 150։

10 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Պեյրութ, 1961, էջ 1100։

11 Ե. Կ. Կարապետյան, Սասուն, Երևան, 1962, էջ 59 և Վ. Ա. Պետոյան, Սասունի ազգագրությունը, Երևան, 1965, էջ 212։

XIX դ. վերջին Խարբերդում, Մեզիրեում, Ախալցխայում[12], Հաճընում[13], Տիգրանակերտում և այլ վայրերում տարածված էր մետաքսյա կտորի արտադրությունը։ Բրդյա միագույն և գծավոր կտորի արտադրությամբ հայտնի էր Շատախի շրջանի Թաղ գյուղը[14]։ Ախալցխայում արտադրվում էր բրդյա (շալ) կտոր, որից կարում էին շալվար, չուխա, կանանց գոգնոց[15]։ Երևանում գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ իր հաստոցը, որով կտավ էր գործում թե տան կարիքների և թե արտահանության համար[16]։ Մալազ (բերընչաղ) կոչված նոսր հյուսվածքով նուրբ կտոր էր արտադրվում Տրապիզոնում և Կ. Պոլսում, որից կարում էին կանանց շապիկ։ Բիթլիսում, Կեսարիայում, Խարբերդում արտադրված բուսանախշերով մետաքսյա կտորներն օգտագործվում էին վերնազգեստ (անթարի, զգուն) կարելու համար։

Բուսանախշերով զարդարված բամբակյա գլխաշոր-յազմայի արտադրությամբ մինչև XIX դարի կեսը հայտնի էր Թոկատը[17], իսկ հետագայում՝ 1870-ական թթ. յազմայի արտադրությամբ հայտնի է դառնում Կեսարիան[18]։ Վանում, Ախալցխայում նույնպես յազմա դաջելը, տարբեր բուսանախշերով այն զարդարելը հատուկ արհեստ էր։ Յազման օգտագործում էին տարեց կանայք, նրանով պատելով գլխի հարդարանքի մասերից մեկը՝ վարդը, ամենօրյա օգտագործման համար, իսկ տոնականը թավշապատ էր։ Դաճաթ բուսանախշերով կտոր էր արտադրվում Կ. Պոլսում։ Կարինում նորահարսի վերնազգեստ-ջուպպան կարում էին բուսանախշերով զարդարված գործարանային մետաքսյա կտորից։ Ջուպպան, ինչպես նաև անթարին և զգունը կարելու համար օգտագործվել է բուսանախշերով և գծերով զարդարված կտոր։

Ալաճա կոչված բամբակյա կտորը արտադրվում էր Կեսարիայում, որից կարում էին անթարի։ Հետագայում ավելի գործածական է դառնում Այնթապում արտադրված ալաճան։ Խարբերդում էր արտադրվում «ասորոց կարմիր չիթ» կոչված կարմիր ու սև գույնի ծաղկազարդերով, թռչնանախշերով և այլ պատկերներով բամբակյա կտորը՝ կտավը, չիթը։

Ըստ գրավոր աղբյուրների և թանգարանային նյութերի Խարբերդի գավառի Խոխ գյուղում հարսների ու աղջիկների ամբողջական զգեստը-դեյրան և Մոկսում կանանց ամբողջական զգեստը[19] կարում էին ծաղկանախշերով զարդարված կտորից։ Բուսանախշերով զարդարված մետաքսյա կտոր էր արտադրվում Դողթն գավառի Ագուլիս, Ցղնա և Սվեգիայի Հաշի-Հաբիբլի գյուղերում։

Այսպիսով, XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայկական գյուղերում ու քաղաքներում արտադրված մետաքսյա, բրդյա, բամբակյա գործվածքների տեսակներն, իրենց գույներով ու նախշերով, հարուստ բազա էին, որոնցից հայ ժողովուրդը ընտրել ու իր ճաշակին, բնակավայրի աշխարհագրական դիրքին, կլիմայական պայմաններին համապատասխան օգտագործել է տարազի այս կամ այն մասի համար։

Տարազը զարդարելու առաջին եղանակի մյուս ձևը ասեղնագործելն է, որ հին սովորույթ է։ XIII դարը պահել է հազարամյակների ոսկեթել ասեղնագործության ավանդները[20]։ Ասեղնագործելու համար օգտագործվել են մետաքսյա, բամբակյա, բրդյա, ոսկյա, արծաթյա թելեր, ուլունքներ, փայլուններ։ Վասպուրականի, Տարոնի, Սասունի գավառներում ասեղնագործությամբ են զարդարվել տղամարդկանց շապիկը՝ թևաբերանից կախված թեզանիկ-ջալահիկներով հանդերձ, շալվարը, աշխատանքային վերնազգեստը (իշլիկ), կանանց գոգնոց-մեզարը՝ Հարքում, Ալաշկերտում, Սեբաստիայում, Մուշում, Սասունում, Արծկեում, Կարկասում, Ապարանում, Բիթլիսում, տղամարդկանց գլխարկ-գդակը՝ Սասունում, արախչին՝ Մուշում, Գնունիքում և այլուր։

---

12 Х. Линч, Армения, Тифлис, 1910, т. I, стр. 90.

13 Ց. Պ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը, Լոս-Անջելես, 1942, էջ 171։

14 Թաղ գյուղում արտադրված բրդյա կտորը ուներ 12 մ երկարություն և 54 սմ լայնություն, մանրամասն տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 25, էջ 191։

15 Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1891. вып. XI, стр. 213.

16 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, С. Петербург, 1852, стр. 7 и 851.

17 Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1879, մասն 1, էջ 85։

18 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937, հ. Բ, էջ 1497։

19 Հայաստանի պատմության պետական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), ազգագրական ֆոնդ, №№ 8179, 842։

20 ՀՊՊԹ, հնագիտական ֆոնդ, № 1140 ա. բ։ Երեխայի զգեստները ասեղնագործված են ոսկեթելով։ Զգեստները գտնված են Անիի պեղումներից, 1908 թ.։

Վերոհիշյալ զգեստների ասեղնագործության հիմնական զարդամոտիվները երկրաչափական նախշերն են՝ ռոմբը, խաչը, թառանկյունին, շրջանը, որոնք արտահայտում են բնության չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի, արևի դաղափարները[21]։ Կանանց զոգնոց-մեղարների վրա, լայն ու նեղ շերտերով կամ թառանկյունաձև շրջանակներով կատարված են երկրաչափական վերոհիշյալ և այլ ոճավորված նախշեր՝ կենդանիների, թռչունների պատկերների և նրանց ոճավորված ձևերի հետ միասին, որոնք խորհրդանշում են պտղաբերությունը։ Տարածված էին նաև կորադիծ կամ կեռադիծ գլուխներով նախշը, որը ժողովուրդը անվանում է շեյթան, ինչպես նաև համամեջ անկյունաշար (օձորուկ) և երկհղի (լաթալ) նախշերը, կենդանիների պատկերները (նկ. 1)։

Զգեստը զարդարելու հիմնական եղանակներից մեկը թրդյա գունավոր թելերով ասեղնագործելն էր։ Այդպես են ասեղնագործվել տղամարդկանց աշխատանքային վերնազգեստը, շալվարը, գլխարկ-ղդակը, արախչին, շապիկը, կանանց զոգնոց-մեղարը (նկ. 2), գլխաշոր-չամբարը՝ կարի տարբեր տեսակներով՝ շարակարով, հարթակարով, խաչկարով, վերադիր կարով, թելքաշով[22]։

Երկրորդ եղանակը գունավոր թելերով, հաստ կամ բարակ ոսկեթելով ոճավորված բուսանախշեր և գծանախշեր ասեղնագործելն է։ Այդ կատարվում էր հետևյալ կերպ՝ ոլորված թելը ուրիշ թելով ամրացվում էր գզեստի վրա ցանկացած նախշի ձևով[23]։ Այս եղանակով ասեղնագործություններ տրվում էր մեկ որակի կամ էլ խառը՝ մի քանի տեսակ թելերով, հաճախ մետաքսյա և ոսկեթելի խառնուրդով, կամ միայն ոսկեթելով, կամ էլ միայն բրդյա թելով։ Այսպես էին ասեղնագործվում Արարկիրի և Ռշտունիքի տղամարդկանց ելակները, տրապիզոնցի կանանց կարճ վերնազգեստները (սայթա, ֆերմենի, շալվարները, անթարիները և այլն)[24]։ Այս եղանակի առանձնահատկությունն այն էր, որ սա գործադրվում էր նաև տրեգի (զայթան) օգտագործմամբ։ Կարինի կանանց յուպպան, զոգնոցը, կրծկալը ունեին միայն ոսկեթելով և ոսկեթելից հյուսած տրեգով զարդանախշեր։ Տրեգը զգեստի եզրին դրվում էր մեկից երեք շարքով, միմյանց կպած։ Երկու կամ երեք շարք տրեգի օգտագործումը զգեստը զարդարելու նպատակից բացի ծառայում էր նաև եզրերը ձիգ պահելու և զգեստի փոված վիճակը ընդգծելու նպատակին։ Ըստ որում հայկական տարազի տարբեր բաղկացուցիչ մասերի ոսկեթելով և ոսկեթելի տրեգով զարդարելը ընդունված էր ոչ միայն տոնական, այլ նաև ամենօրյա զգեստների համար, որոնք ունեին միատեսակ ձևածք։

Զգեստը ասեղնագործությամբ զարդարելու երրորդ եղանակը ոսկեթելով հյուսված նեղ ժապավենով վերագիր նախշեր կատարելն է։ Ժապավենը զգեստի վրա ամրացվում էր շուլալ կարով կամ պտտկարով։ Արծկևում, Բիթլիսում տղամարդկանց ու կանանց կարճ վերնազգեստի ստինքի վրա նման ժապավենով արվում էր համամեջ շրջանագծերից կազմված նախշեր։ Արծկևում օգտագործվել է նաև վերագիր գունավոր շրջանաձև կտոր՝ ոսկեթելից հյուսած ժապավենի հետ միասին։

Ոսկեթելով և մետաքսյա գունավոր թելերով զգեստի ասեղնագործության չորրորդ եղանակը ուսուցիկ հարթակարով արված բուսանախշերով և այլ ոճավորված նախշերով զարդարելն է։ Այս եղանակով ասեղնագործվում էին թաղչյա, մահուդե զգեստները[25], օրինակ, Արարկիրի, Աղարտզարի և Կեսարիայի կանանց վերնազգեստները, Նոր Նախիջևանի կանանց զլխաշորը, Բարձր Հայքի կանանց վերնազգեստը, զոգնոցը և այլն։

Կտրոն տարազի ասեղնագործությամբ զարդարելու մոտիվը բուսանախշերն էին։ Սովորաբար զոգնոցի (որի եզրերը մեծ մասամբ ալիքաձև էին՝ ծոնթաձև) կամ յուպպայի եզրերին ասեղնագործել են մեկ շարք բուստնախշ։ Ասեղնագործության համար ոսկեթելից բացի օգտագործվում էր նաև արծաթյա թել, փայլուններ, ուլունքներ։ Տրապիզոնում կանանց վերնազգեստը, շալվարը, կարճ վերնազգեստը, Արտրկիրում՝ վերնազգեստը զարդարում էին արծաթաթելով, ոսկեթելով, արուրբ փայլուններով։

Տրապիզոնի, Կեսարիայի, Սեբաստիայի, Կարինի տարազի զարդարման համար հիմնական միջոց էր ոսկեթելով հյուսած տրեգը, որը օգտագործվում էր և՛ ասեղնագործության համար և՛

---

21 Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական զարդարվեստը, Երևան, 1955, էջ 115։

22 Ս. Ս. Դ ա վ թ յ ա ն, Հայկական ասեղնագործության ձեռնարկ, Երևան, 1956, էջ 14։

23 ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ, № 947 ելակ (Ամասիա), 952 կարճ վերնազգեստ (Սեբաստիա), 965 ելակ (Կարին), 8049/6 կարճ վերնազգեստ (Տրապիզոն), 8067/25 ելակ (Արարկիր) և այլն։

24 Նույնը, №№ 955, 920, 961, 2073, 2074, 2077, 8049/6։

25 Ս. Ս. Դ ա վ թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 14։

որպես առանձին երիզազարդ։ Զգեստի եզրերին կարում էին նաև մետաքսյա կամ բամբակյա դեղին ու կարմիր գույնի թելերից հյուսված տրեզ[26]։ Վերջինս օգտագործվում էր նաև կոճակներ կարելու և կոճակօղերի համար։

Հայաստանի մի շարք գավառներում տրեզագործությունը (տրեզի պատրաստումը՝ երիզագործությունը) հատուկ զբաղմունք էր, արհեստ։ Թոկատի Ղեզեզնոց կոչված փոքր փողոցում եղել են տրեզագործության հատուկ արհեստանոց-խանութներ։ Տրեզ հյուսել են ծեր կանայք, հարդով լցված ուլի մորթու տիկի վրա, հատուկ փայտիկների (գլխիկ) օգնությամբ։ Բալուր շրջանում տրեզը գործել են փայտյա երկճյուղ գործիքի վրա[27]։

Գողթնում, Կարինում զգեստի եզրերը զարդարելու համար օգտագործվել է ոսկեթելից հյուսված ժապավեն։ Գողթնում ոսկեթելի ժապավենը կարել են կանանց կարմիր գույնի շապկի կրծքամասի բացվածքի և թևաբերանի եզրերին։ Այդ ժապավենազարդը փոխարինել է երբեմն թևաբերանի արծաթյա գնդաձև կամ ռոմբաձև կախիկ-զարդերին։ Կարինում կանանց վերնազգեստի (խրխա) թևաբերանի ճեղքի եզրերն ունեին ոսկեթելի վերոհիշյալ ժապավենազարդը։ Վասպուրականում, Տարոնում, Սասունում այծի մազից գործվող տղամարդկանց տաք վերնազգեստ-աբան (քյազախիկ) զարդարելու համար օգտագործում էին ոսկեթելից հյուսած լայն ժապավեն։

Հայկական տարազի բաղկացուցիչ մասերի զարդարման համար կարևոր նյութ են ծառայել գունագեղ ուլունքները, որոնք ամրացվում էին զգեստին հելունով գործելու կամ ասեղնագործելու միջոցով։ Վասպուրականի Այլուր և Կարճկան գյուղերում սպիտակավուն և երկնագույն ուլունքներով էին զարդարում կանանց գլխարկը, Արծկեում, Արճեշում, Բողնիսում, Կարճկանում, Սասունում՝ կանանց գլխաշոր-շամբարը։ Սասունում, Մոկսում, Շատախում ուլունքազարդ էին տղամարդկանց գլխարկի շուրջը փաթաթած սև ու կարմիր գույնի փուչիների ծոպերը։

Տարազին առանձնահատուկ տեսք ու շքեղություն էին տալիս մարգարիտներով զարդարված զգեստամասերը։ Կարինի կանանց գլխի հարդարանքը յուրատեսակ էր իր հնգական մարգարտաշար քունքակախիկներով (զիլիֆլըզ), որոնց ծայրերին ամրացվում էին մեկական ոսկյա գրամ, կամ կեղծ ոսկյա՝ լատունե դրամ (նկ. 8)։ Մարգարիտներով էին զարդարում կանանց ճակտոց-ոսկեշարը (Թրք. չավշակ), որն ունենում էր նաև ոսկյա տերևներով, ճյուղերով, ծաղիկներով կազմված, կամ էլ զույգ ռոմբաձև մեկական ծայրերով միմյանց կպած նախշերի շարանով զարդեր։ Նոր Նախիջևանի Զալթր գյուղում կանանց թավշյա գոտին ամբողջովին ասեղնագործել են ծաղկանախշերով արված մարգարիտներով (նկ. 10)։

Տարազի զարդարման առաջին եղանակի երրորդ խումբը գունավոր կտորից կարված երիզազարդ ունեցող տարազամասերն են։ Դա արվում էր Արցախի, Զանգեզուրի, Գողթնի կանանց զգեստի վրա շապկի կրծքամասի բացվածքի շուրջը, որը սև գույնի թավշյա կամ բամբակյա կտորից էր կարվում։

Նույն վայրերում կանանց վերնազգեստ-արխալուղի աջ ու ձախ փեղկերի կողքի ճեղքերի եզրերին և քղանցքին կարում էին կարմիր գույնի մետաքսյա կամ բամբակյա կտորի երիզ[28] (քյոբա), իսկ տաք վերնազգեստ-քուրքի եզրերին, նրա թևատակի ճեղքի շուրջը աղվեսի մորթուց առաջ ամրացնում էին բացառապես կանաչ[29] գույնի մետաքսյա կտորի երիզ (նկ. 3)։ Կարինի կանանց թավշյա շուպպայի քղանցքի եզրին կարում էին կապույտ գույնի մահուդյա կտորից երիզ, որը նեղ զարդագիծ լինելուց բացի, տրեզի հետ մեկտեղ ծառայել է զգեստի քղանցքը լայն, փված պահելու նպատակին։

Զգեստը ոսկյա կամ մետաքսյա թելերից հյուսված տրեզով զարդարելը և մետաքսյա, բամբակյա, բրդյա կտորից երիզը ամենատարածված զարդաձևերն են։

Տարազի զարդարման ձևերից մեկն էլ ժանյակով զարդարելն է։ Ժանյակը ասեղնագործում էին առանձին և զգեստի վրա ամրացնում վերադիր, կամ ուղղակի կարում էին եզրերին։ Ծաղկանախշեր ունեցող նուրբ ժանյակով էին զարդարում Կարինի կանանց գլխի հարդարանքի մա-

---

26 XX դ. սկզբին Ախալցխայում տրեզ գործող հայտնի վարպետ էր Միհրան Ֆոլոսյանը, որի գործիքը ավելի կատարելագործված էր. այն բաղկացած էր չորս բաժնից, յուրաքանչյուրը առանձին տրեզ գործելու համար, գործիքը աշխատեցնելու դեպքում միաժամանակ 4 տեղով տրեզ էր գործվում։ Այժմ այն գտնվում է ՀՊՊԹ-ում, ազգագրական ֆոնդ, № 7751։

27 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիա հայոց, Կահիրե, 1952, էջ 1347։

28 Մեկ վերնազգեստ-արխալուղի երիզազարդի համար անհրաժեշտ է 1 մ կարմիր գույնի մետաքսյա կամ բամբակյա կտոր։

29 Ս. Դ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 117։



Նկ. 1. Թեզանիկ-չալահիկ, Գյավաշ, XIX դ. վերջ



Նկ. 2. Գողնոց-մեկար, Եղեգիս, XIX դ. վերջ

Նկ. 3. Կնոջ տարազ, Գողթն, XIX դ. վերջ

Նկ. 4. Կնոջ տարազ, Տրապիզոն, XIX դ. վերջ

Նկ. 5. Կեսիկ գլխապարդ, արծաթ, Սյունիք, XIX դ.
Նկ. 6. Գլխի թասեր, արծաթ, Վասպուրական, XIX դ. վերջ



Նկ. 7. Ճամշիկ, կնոջ վերնազգեստի զարդ, արծաթ,
Վասպուրական, XIX դ. վերջ

Նկ. 8. Կնոջ տարազ, Լենինական, XX դ. սկիզբ
Նկ. 9. Կնոջ գլխարկ, Կարին, XIX դ. վերջ
Նկ. 10. Կնոջ մարգարտազարդ գոտի, Նոր Նախիջևան, դ. Զալթր, XIX դ. սկիզբ
Նկ. 11. Կնոջ գոտի, Կարին, 1886 թ.

սերից մեկը, որը կոչվում էր վարդ (ոյա, թանթանա)։ Վարդի ժանյակը ասեղնագործում էին մետաքսյա երփներանգ թելերով, իսկ որպեսզի պսակաձևթիկները լավ տեսք ունենան, ծաղիկները դիտվեն, դրանց եզրերին ձիու մաղ կամ բարակ մետաղյա թել էին հագցնում[30]։ Վարդի վրա այդպիսի ժանյակներով պատրաստում էին մանուշակ, նարդիզ, մեխակ, շուշան, որոնք դասավորում էին կանաչ դույնի ասեղնագործ ոլորապտույտ ձևով նախօրոք ամրացված ժապավենաշերտի վրա։ Դաղկանախշերի հետ միասին երբեմն ամրացվել են նաև աքաղաղանախշեր։

Ղեստի զարդարման յուրօրինակ ձև է Արցախում, Զանգեզուրում և Գողթնում արծաթյա դնդաձև և երկարավուն կախիկներով ու մանր խողովակներով (սուրմա) թևքերի, իսկ Շամախիում կանանց վերնազգեստ-արխալուղի աջ ու ձախ փեղկերի եզրերի զարդարելը։ Արծաթյա դրամների շարանով էին զարդարում Սյունիք-Արցախի, Բարձր Հայքի կանանց գլխի հարդարանքի մասերից մեկը՝ ոսկեշար Հակտոնցը (շևրիդ)։ Գողթնում բարձրադիր Հակտոնցի-դինգի եզրերին (որը ասեղնագործում էին մեծ մասամբ ոսկեթել բուսանախշերով, թռչունների պատկերներով) կախում էին արծաթյա տափակ, կարմիր ու կանաչ դույնի ակներով զարդարված կախիկներ-թապաղաներ, յուրաքանչյուրի ծայրից՝ երեքական փոքրիկ արծաթյա գնդիկներ, բոժոժներ կամ տեղական բարբառով՝ «ահիթպլտոկ»։

Սյունիք-Արցախում, Գողթնում գլխի հարդարանքի անբաժան մասն էր նաև արծաթյա նախշադարդ տախտակներից, շղթաներից ու գնդաձև կախիկներից բաղկացած կեռազարդը (չանդլայ)[31] (նկ. 5), որով ամրացնում էին գլխակապերը։ Այդ զարդի կեռիկավոր տախտակները նշաձև էին ու երկու կողմից խաչաձև ամրացվում էին գագաթին։

Տրապիզոնում, Կերասունում, Սամսունում, Շապին-Գարահիսարում կանանց գլխի հարդարանքն էր արծաթյա թասակը (թարքոշ, թաբլա, նկ. 4)։ Վասպուրականի, Տարոնի, Սասունի գավառներում աղջիկների տոնական զգեստի հետ միասին բարձրադաշտ արախչին տարազի անբաժան մասն էր[32]։ Դրա վրա ամրացնում էին թասակը, որը ափսեանման արծաթյա դարդ է՝ զուգաթելի կամ դրվագման եղանակով պատրաստված։ Թասակի եզրին ամրացվում էին կարճ շղթաներով մահիկների շարան[33] (նկ. 6)։

Ցուրահատուկ զարդարման ձևեր մեծ և փոքր թռչնանման արծաթյա դրվագված տախտակներից բաղկացած նախշերի շարանը — շամշիկը, որը կարվում էր կանանց տոնական վերնազգեստի զպունի աջ ու ձախ փեղկերի եզրին զոտկատեղից վերև[34] (նկ. 7)։

Տարոնում, Աղձնիքում, Վասպուրականում գլխի հարդարանքի կարևոր զարդաձևն էր զունավոր ակերով և կախիկներով արծաթյա մախշան։

Հայկական տարազի զարդաձևեր էր նաև աղվեսի մորթու օգտագործումը որպես երիզ։ Արցախի, Զանգեզուրի, Գողթնի, Կեսարիայի, Երևանի և Թիֆլիսի հայ համայնքի կանանց տաք վերնազգեստը, որ կարվում էին կարմիր կամ կապույտ դույնի թավշից, երիզվում էր աղվեսի մորթով։

Ղեստի զարդարման մեջ կարևոր տեղ էր գրավում զոտին։ Գեղագիտական ու առողջապահական նշանակություն ունենալուց բացի զոտին ուներ նաև գործնական նշանակություն։ Բրդյա կտորից կարված լայն զոտու մեջ էին պահվում դեները, գրամը, ծխախոտի քսակը և այլն։ Զոտին համարվել է կտրիճության, բարության խորհրդանիշ, որը գալիս է զոտու նախնական պաշտպանական նշանակությունից։ Դրանով է բացատրվում հնագույն բրոնզե լայն զոտիների ու XIX դ. տարածված արծաթյա մեծածավալ ճարմանդների գործածությունը։

Կտորից զոտիներ արտադրվում էին գրեթե բոլոր գավառներում։ Արծաթյա զոտիները պատրաստում էին ոսկերիչ-արծաթագործները Բարձր Հայքում, Վասպուրականում, Արարատյան հովտում և այլուր։ Բարձր Հայքում, ինչպես և Շիրակում, Ախալցխայում, Ախալքալակում կանանց զոտին, որ ամրացվում էր սովորաբար զոգնոցի վրա, նեղ էր։ Այն գործում էին մետաքսյա գեղին և կարմիր դույնի թելերով, իսկ եղրանախշերի համար օգտագործում էին նաև կանաչ, սպիտակ և սև դույնի մետաքսաթելեր։

Զոտիները սովորաբար հյուսում էին բուսանախշերով՝ կենաց ծառի տարբեր ձևերով արտահայտված պատկերներով (նկ. 11), երկրաչափական, խորանաձև, կենցաղային առարկաների՝ սափորի, մկրատի, մաքոքի պատկերներով և մեծ մասամբ մակագրությամբ՝ «Ի վայե-

---

30 Ս. Ա. Դավթյան, Հայկական ժանյակ, Երևան, 1966, էջ 22։

31 ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ, №№ 5140, 6716, 6717, 6718, 6727։

32 «Ազգագրական հանդես», գիրք 26. Թիֆլիս, 1917, էջ 153։

33 ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ, №№ 6953, 6954 (Բերկրի), 6501 (Վան), 6497 (Ալաշկերտ)։

34 Նույնը, №№ 5031, 5032, 5033, 5037, 5042, 5043։

լումն Շողակաթի», «Ի վայելումն Հեղինեի»՝ այսինքն նրա, ում համար որ գործվել է։ Եթե գոտին արտադրվում էր ոչ թե պատվերով, այլ վաճառքի համար՝ ունենում էր «Ի վայելումն կապողի» մակագրությունը. նշվում էր նաև պատրաստման տարեթիվը և ամիսը[35]։ Գոտին ծայրերին ուներ մեկական երկար փնջիկ։ Կարնոհայ տարազի մեջ գոտին միշտ ամրացվում էր գոգնոցի վերին եզրին, այն ուներ սովորաբար 3—3,20 մ երկարություն և 3—4 սմ լայնություն։ Կարսում գոտու դեղին գույնի մետաքսյա թելին երբեմն փոխարինել է ոսկեթելը, իսկ նախշերը վերոհիշյալ վայրերի կանանց գոտիների գրեթե կրկնությունն են։

Ցուրբինակ ձև ուներ Տրապիզոնում կանանց գոտին, որը վանդակավոր կամ գծավոր կտորից էր, եզրերը երկար ծոպերով։ Տղամարդկանց գոտին Մոկսում պատրաստում էին երեք տապակից բաղկացած գծավոր կտորներից, ըստ որում տապակները ունեին տարբեր գույնի գծեր և միմյանց միացվում էին խաչմերուկ կարով։ Նման գոտիները ունեին 85 սմ—1.35 մ երկարություն և 75 սմ — 95 սմ լայնություն։ Դրանց ծայրերը զարդարված էին երկար ծոպերով, իսկ անկյուններում ունեին մետաքսյա գունավոր թելերով պատրաստված 3—4-ական փնջիկ։

Հայկական տարազի զարդաձևերից մեկն էլ ծամթելն էր, որը օգտագործվել է Աղձնիքում, Վասպուրականում և Արևմտյան Հայաստանի այլ գավառներում ծամթելը աղջիկների և նորահարսների գլխի հարդարանքի մասն էր, որով բնական հյուսերը հարստացվում էին արհեստական, ավելի հաստ հյուսերով։ Այն զարդարում էին գույնզգույն ուլունքներով և արծաթյա շղթաներով։

Գլխի հարդարանքին առանձնահատուկ տեսք էր տալիս և գեղեցկացնում տղամարդկանց գլխարկ-քոլոզի մետաքսյա փաթաթանը՝ փուշին իր երկար ծոպերով, որոնք կախվում էին կրողի ճակատի վրայից՝ հասնելով մինչև ունքերը[36], կար նաև փաթաթանի մեկ ուրիշ տեսակ, որը կոչվում էր ագալ։ Դա բրդյա կամ բամբակյա կտորով պատած 5 սմ տրամագծով երկար գլանափաթեթ էր, որը դասավորում էին քոլոզի եզրին 3—4 շարքով, պարուրաձև, ապա ամրացնում միմյանց։

Հայկական տարազի զարդարման երրորդ խումբը նույն կամ ուրիշ կտորի վերադիր երիզն է, որը լինում էր ձևավոր կամ ուղիղ։ Բաղեշում XIX դ. ընդունված էր զգեստի քղանցքը. առաջամասը երկայնակի ուղիղ գծով, թևաբերանը նույն զգեստի կտորից ոսմբաձև, եռանկյունաձև նախշերի շարանով զարդարելը։

Վանում կանանց շապկի քղանցքը զարդարում էին վերադիր կապույտ և գեղին գույնի բամբակյա կտորներով։ Այս խումբն այնքան էլ բնորոշ չէ հայկական տարազին, բայց առանձին գավառների կանանց զգեստների համալիրի մեջ դրսևորում է տարազի այլ տարբերակ։

Հայկական տարազի զարդարման չորրորդ խումբը՝ դարսերը հանդես է գալիս XIX դ. կեսերին՝ կապված կարի մեքենայի մուտք գործելու հետ։ Դարսերով էին զարդարվում կանանց շապիկը Վանում, տղամարդկանց վերնազգեստ-արխալուղը, տաք վերնազգեստ-չուխան Լոռիում, Զանգեզուրում, Արցախում, Գողթնում, կանանց վերնազգեստը Ակնում։ Այս խմբի զարդաձևը միաժամանակ զգեստի ձև էր։

Նախքան կարի մեքենայի երևան գալը անթարու, խրխայի, ելակի եզրերի զարդաձևերը ձեռքով էր արվում. ըստ որում խրխայի քղանցքի անկյուններում այն արվում էր շեղակի միմյանց զուգահեռ մի քանի գծերով։ Ձեռքի զարդակարով էին զարդարում տղամարդկանց արխալուղը Արցախում, Զանգեզուրում, Գողթնում։ Աղջիկների գլխարկը Վասպուրականում և Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում կարում էին սպիտակ քաթանից, մակերեսը ամբողջովին ծածկելով միմյանց հատող շեղակի գծերով, որոնք առաջանում էին շուլալակարով[37]։ Շեղակի կարագծերի հատումից ստացվում էր մանր ոսմբերի շարաններ-ըղրուշներ։

Հինգերորդ խմբին պատկանում են զգեստի այն տեսակները, որոնք զարդարված են ծալաբոլորքով (օրորկի, վալա), շեղ կամ ուղիղ կտորի նեղ ու լայն ժապավենազարդով։ Այս զարդաձևը հանդես է գալիս XIX դ. վերջին ու XX դ. սկզբին և հետևանք էր կապիտալիզմի զարգացման ու վաշխառուական կապիտալի դյուղ ներթափանցելուն։ Շնորհիվ այդ հանգամանքի լայն տարածում են ստացել գործարանային արտադրանքը և քաղաքային տարազը։ Եվրոպականի ազդեցությամբ սկսվում է հատկապես հարուստ կանանց զգեստի նորաձևությունը։ Զարդաձևեր են հայտնվում շրջազգեստի շուրջը՝ կրծքի մասում երկայնակի վերադիր ծալաբոլորքով։

---

35 Նույնը, №№ 570, 572, 571, 7042, 7603, 7748/33 և այլն։

36 Վ. Ա. Պետոյան, նշվ. աշխ., Երևան, 1965, էջ 269։

37 ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ, №№ 3688, 1455, 1456, 1458, 1459, 1462, 1460, 1463, 1473։

Որպես ծալարոլորք գործածվել է նաև գործարանային ժանյակ։ Ակնում, Ախալցխայում, Լենինականում վզի բացվածքի եզրի նուրբ կտորից կամ ժանյակով կարված նեղ ծալարոլորքը տալիս էր զգեստին գեղեցիկ տեսք՝ մանավանդ, որ մեքենակարը փոխարինում էր ասեղնագործությանը։ Նույնը նկատվում է նաև ուրիշ ժողովուրդների մոտ։ Երևանում, Լոռում, Գողթնում, Կապանում, Մեղրիում գլխաշոր-շղարշը զարդարում էին գործարանային ժանյակով։

Հայ ժողովրդի տարազի զարդարման երկրորդ հիմնական ձևը լրացուցիչ զարդեր կրելն է։ Զարդերի գործածությունը ընդունված էիս գրեթե բոլոր գավառներում։ Զարդեր են ապարանջանը, մանյակը, ականջդը, մատանին, թունքակախիկները, վզնոցի մի քանի տեսակները, որոնք պատրաստում էին ոսկուց, արծաթից, մարջանից, մարգարտյա ուլունքներից։ Եռանկյունաձև արծաթյա շղթայացանցը — երեսնոցը շատ տարածված էր Վասպուրականում, Տուրուբերանում, Աղձնիքում և այլուր։

Զարդերից կարևոր նշանակություն էին տալիս ապարանջանին, որը պատրաստում էին մետաղի տարբեր տեսակներից և ուլունք-մարջանից։ Ոսկյա և արծաթյա ապարանջանների գործածությունը հատկապես ընդունված էր Բարձր Հայքում։ Զարդերի ոսկյա կամ արծաթյա լինելը կախված էր կրողի սոցիալական վիճակից։

Հայկական տարազի բազմազան զարդաձևերի առանձնահատկությունն այն է, որ մի ձևը դուրդրվում է երկրորդ, երրորդ ձևերով, տալով զգեստին ավելի շքեղ ու գեղեցիկ տեսք։ Հայկական տարազի ընդհանուր համայիրի մեջ կարևոր նշանակություն ունի կտորի որակը, գույնը, կրողի հաշակին ու աշխարհագրական պայմաններին համապատասխան ընտրությունը։ Կտորի և ասեղնագործության նախշերի մոտիվներից երկրաչափականը շատ տարածված է Վասպուրականում, Աղձնիքում, Տուրուբերանում, իսկ բուսանախշերը, մեծ մասամբ Բարձր Հայքում, Փոքր Հայքում, Համշենի հայերի կենցաղում։

Հայկական տարազի զարդաձևերը սերտորեն կապված են ժողովրդի հաշակի, կուլտուրական մակարդակի, կլիմայական պայմանների առանձնահատկությունների, տնտեսության բնույթի և սոցիալ-տնտեսական այլ գործոնների հետ։

НАРОДНЫЕ СПОСОБЫ ОРНАМЕНТИРОВАНИЯ ОДЕЖДЫ У АРМЯН В XIX—XX ВВ.

НАЗИК АВАКЯН

Резюме

Армянская народная одежда представляет собою сложный комплекс. Богаты и многообразны украшения этих костюмов.

Существуют два основных способа украшения: 1. Украшения, которые как бы составляют неотъемлемую часть костюма. 2. Ношение дополнительных украшений вместе с вышеупомянутыми.

Первый вид украшения делится на следующие подгруппы: а) украшения узорами, исполненными на самом материале-ткани, б) украшения вышивкой, в) украшения посредством нашивания отделки в виде каемок из другого или из того же материала, г) украшения складками и строчкой, д) украшения оборками. Несколько групп первого вида украшений в свою очередь делится на подгруппы, которые характеризуют особенности костюмов различных этнографических районов Исторической Армении.

Сложны и многообразны способы украшения армянского народного костюма. Различные виды украшения, начиная с выработки ткани и кончая прикладными украшениями из серебра и драгоценными камнями, придают армянскому костюму весьма красочный вид. Виды этих украшений варьируются по районам в зависимости от конкретных условий: материала, климата, вкуса. Вместе с тем наблюдается резкая разница в украшениях в зависимости от социального положения носителя костюма.

Способы и виды украшений армянских народных костюмов тесно связаны с материальным состоянием народа, культурным уровнем, климатическими условиями, в которых он живет, и с целым рядом других вопросов социально-экономического характера.

---

38 В. Н. Белицер, Народная одежда удмуртов, Москва, 1951, стр. 49.